ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 19. Վերասոցիալականացման և դրական վարքագծի ձևավորման նպատակով աշխատանքը դատապարտյալի հետ

5. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ դատապարտյալի ռիսկերի և կարիքների գնահատումն իրականացվում է՝ հաշվի առնելով պատժի տեսակը, կատարված հանցանքի բնույթն ու վտանգավորությունը, դատապարտյալի անձը, պատժի կատարման ընթացքում դատապարտյալի դրսևորած վարքագծի առանձնահատկությունները, դատապարտյալի վերաբերմունքն իր կատարած հանցանքին, պատժի ժամկետը, ինչպես նաև պատիժների կատարման և քրեաիրավական ներգործության այլ միջոցների կիրառման տարբերակման և անհատականացման սկզբունքով պայմանավորված այլ հանգամանքներ: Դատապարտյալի ռիսկերի և կարիքների գնահատման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը:

Հոդված 57. Ազատազրկում և ցմահ ազատազրկում կատարող քրեակատարողական հիմնարկները և անվտանգային գոտիների տեսակները

1. Քրեակատարողական հիմնարկները բաղկացած են անվտանգային գոտիներից: Յուրաքանչյուր քրեակատարողական հիմնարկ բաղկացած է մեկից երեք անվտանգային գոտուց:

2. Ըստ անվտանգության աստիճանի՝ չափահաս դատապարտյալների համար ազատազրկում և ցմահ ազատազրկում կատարող քրեակատարողական հիմնարկներում անվտանգային գոտիների տեսակներն են.

1) ցածր անվտանգային գոտի.

2) միջին անվտանգային գոտի.

3) բարձր անվտանգային գոտի:

3. Անչափահաս դատապարտյալները պատիժ են կրում անչափահաս դատապարտյալների համար նախատեսված քրեակատարողական հիմնարկում, որտեղ նրանց համար նախատեսվում են պատժի կրման հատուկ վերականգնողական պայմաններ, որոնք ուղղված են անչափահաս դատապարտյալի ֆիզիկական, հոգեկան, հոգևոր, բարոյական և սոցիալական բնականոն զարգացումն ապահովելուն, նրան դաստիարակելուն և այլ անձի բացասական ազդեցությունից պաշտպանելուն:

4. Հիվանդանոցային պայմաններում երկարատև բժշկական օգնության, սպասարկման և խնամքի կարիք ունեցող դատապարտյալները տեղափոխվում են բուժական քրեակատարողական հիմնարկ: Բուժական քրեակատարողական հիմնարկում

դատապարտյալը պահվում է սույն օրենսգրքով և իրավական այլ ակտերով միջին անվտանգային գոտու խիստ պայմանների համար նախատեսված պայմաններում: Բուժական քրեակատարողական հիմնարկում դատապարտյալին պահելու պայմանների առանձնահատկությունները սահմանվում են քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգով:

Հոդված 59. Դատապարտյալների սկզբնական տեղաբաշխումն ըստ անվտանգային գոտու տեսակների

4. Բժշկական օգնության և սպասարկման անհրաժեշտության դեպքում դատապարտյալը տեղափոխվում է համապատասխան քրեակատարողական հիմնարկում տեղակայված բժշկական ստորաբաժանում կամ բուժական քրեակատարողական հիմնարկ:

Հոդված 64. Դատապարտյալներին միմյանցից անջատ պահելը

2. Քրեակատարողական հիմնարկներում տեղակայված բժշկական ստորաբաժանումներում և բուժական քրեակատարողական հիմնարկում դատապարտյալներին անջատ պահելու՝ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները կիրառվում են այնքանով, որքանով հնարավոր է դրանք ապահովել:

Հոդված 91. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող մարմինը և դրա կողմից բժշկական օգնության և սպասարկման իրականացման ընդհանուր կարգը

3. Դատապարտյալների արտահիվանդանոցային և հիվանդանոցային պայմաններում բժշկական օգնությունը և սպասարկումն իրականացնում են մասնագիտացված կազմակերպության՝ քրեակատարողական հիմնարկներում տեղակայված՝ համապատասխան լիցենզիա ունեցող բժշկական ստորաբաժանումները, բուժական քրեակատարողական հիմնարկը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ լիցենզավորված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող առողջապահական մարմինների բուժական հիմնարկները:

Հոդված 106. Դատապարտյալի նկատմամբ տույժի միջոցներ կիրառելու կարգը

7. Դատապարտյալին պատժախցից քրեակատարողական հիմնարկի բժշկական ստորաբաժանում կամ բուժական քրեակատարողական հիմնարկ տեղափոխելու դեպքում քրեակատարողական հիմնարկի բժշկական ստորաբաժանումում կամ բուժական քրեակատարողական հիմնարկում դատապարտյալին պահելու ժամանակը հաշվվում է տույժը կրելու ժամկետի մեջ:

Հոդված 169. Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը

7. Սույն օրենսգրքի 99-րդ հոդվածի 1-ին մասն ուժի մեջ է մտնում օրենսդրությամբ սահմանված չափանիշներին համապատասխան, անվտանգային յուրաքանչյուր գոտու պայմաններն ապահովող բժշկական ստորաբաժանումներ ստեղծելուց և շահագործման հանձնելուց հետո, սակայն ոչ ուշ, քան 2025 ~~2024~~ թվականի հուլիսի 1-ը: